

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՆՏԵՄԱԴՐՅԱՆ
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊՐՈՖ. Պ. ՔԱՂԱՔԱՐՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ



ԿՈՒՏԱՏԵՍՎԱԿԱՆԻ ՑԵՎ ԿՈՐԴԱՏԵՍՎԱԿԱՆ
ՀԱՆԳՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

31-8
-14

ՊՐՈՖ. Պ. ՔԱՂԱԿԱՐՅԱՆ

ԱՏՈՒԳՎԱՅՐ է 1961 թ.

ՏԵՂԱԿԱՆ
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Հ 2712



ԳԵՐԱԴՐՈՒՅԹ ՕԵՐԵԿԵԼ 1936

ՏԵՂՈԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵ

Առաջավոր կոմբայնավարների և տրակտորիատների հավաքին ժեր կուսակցության մեծ առաջնորդընկ. Ստալինը խնդիր դրեց՝ առաջիկա 3—4 տարում հացահատիկների բերքն այժմյան 4—5 միլիարդ ֆրան համար 7—8 միլիարդ ֆրի, այսինքն՝ հացահատիկների այժմյան բերքն ավելացնել մոտ 35 տոկոսով, մի առաջապրանք, վորի կատարման անհրաժեշտությունն ընկ. Ստալինն այնպիս հանձնարեղ կերպով հիմնավորեց, վոր մեզ մնում եւ միայն բոլոր հնարավոր միջոցներն ոպապուրծել այդ առաջապրանքի անշեղ իրազործման համար:

Հացահատիկների բերքի այդ չափով բարձրացման համար մենք ունենք անհրաժեշտ նախադրյալները՝ խոշոր սոցիալիստական գյուղատնտեսություն և գարգացած մեքենայացում: Սակայն, այս յերկու հիմնական նախադրյալներից բացի, բերքը բարձրացնելու համար առնելիքաժամկետ կարգավորել սերմացվի խնդիրը՝ հատկապիս անորակ սերմերը վորակավոր սերմերով մոխարիները, ուժեղացնել զնասատուների և հիվանդությունների դեմ մղվազ պայքարը, բերքը հավաքել անկարուստ և, վոր պլասվորն եւ, կարգավորել հողի ֆիզիկական և քիմիական գրությունը՝ լավացնել բույսերի աճեցողության ֆիզիկական և քիմիական պայմանները: Հատկապիս այս յերկըրդը՝ հողի քիմիա-

կան դրությունը լավացնելը, այսինքն՝ բռւյսերին անհրաժեշտ սննդանյութերով պարահավելը պետք է լինի մեր սիջոցառութիւնի կարեռագույն խնդիրներից մեկը:

Բռւյսերի սննդառության կարգավորումը տեղի յեւնենում հողերի պարարտացման միջոցով, վորը հողի բերքատվության բարձրացման ամենահիմնական պայմաններից մեկն է հանդիսանում, ինչպես այդ յերեսում և աշխարհիս առենահին փորձնական հիմնարկի՝ Ռոգածառեղի (Անգլիայում) փորձնական կայանի մոտ հարյուր տարի տեղություն ունեցող փորձերից։ Այսպես, 77 տարիա պարարտացման փորձերը տվել են հետեւյալ արդյունքները։

77 տարիա ընթացքում ստացված ցոր, միջին բերքը ցենտ. հեկտ.

	Տառիկիլ	Ճղուտ
1. Առանց պարարտացման	10,5	12,4
2. Երիվ արհետական պարարտացում	26,3	28,7
3. Գոճակը	29,9	43,3

Այս փորձը ցույց է տալիս, թե ինչպես առանց պարարտացման հողերը ցանելու դեպքում բերքն այնքան է փոքրանում, վոր նույնիսկ հողի մշակության և բռւյսերի զարգացման ու աճեցողության մյուս բոլոր ազդակների լավագույն պայմաններում գտնվելու դեպքում։ Նրա բերքը տասը ցենտներից ավելի չի լինում։ Մինչդեռ միենույն հողային և կլիմայական պայմաններում գտնվող, միենույն ձևով մշակվող և նույն սերմերը ցանված հողի բերքը՝ պարարտանյութերի գործադրման դեպքում՝ համեստ և մինչև 30 ցենտներ հատիկի և 43 ցենտներ ճղուտի։

Այսպիսի պարարտացման առաջնակարգ դերը ցուցաբերող փորձեր շատ կան, սակայն այլակա փորձն

ավելի արժեքավոր և նրանով, վոր նա, ինչպես տառընք, 77 տարվա տեղություն ունի, հետեազես ամեն տեսակի պատահականությունից՝ ինչպես կլիմայական պայմանների անբարեալաւ կամ նպաստավոր լինելուց, զանազան վնասատուների և հիվանդությունների արտակարգ ուժով զարգացումից և այլն, զերծ են և ցայտուն կերպով հայտաբերում են պարաբռացման նշանակությունը,

Ինչպես ամեն աել, մեզ մոտ ևս պարաբռացումը պետք եւ վճառկան դեր կատարի մեր մեծ առաջնորդի առաջադրած 7—8 միլիարդ փութ հացանատիկ արտադրելու առաջադրանքի իրականացման գործում Այս հանգամանքն ել ավելի կարեսք նշանակություն և ստանում հատկապես մեր յերկրում, վորտեղ հողերի մշակությունը հարյուրավոր տարիների պատմություն ունի և վորտեղ շնորհիվ վորոշ կլիմայական, տնտեսական և կենցաղային պայմանների, դաշտերի պարաբռացում համարյա տեղի չի ունենում։ Հատկապես գլխավոր պարաբռանյութը՝ զոմադրը մեզ մոտ հիմնականում գործ եւ անվել վորպես վառելիք և այդ բանի հետեւանքով ել զոմադրի վրա մենք չենք նայել վորպես հողի բերքատվությունը բարձրացնելու հիմնական միջոցի վրա, և կանոնավոր հիմքերի վրա դրված զոմադրային տնտեսություն չենք վարել։ Սրա հետեւանքով ել մեր դաշտերը հարյուրավոր տարիներ անընդհատ առանց պարաբռացման մշակության յենթարկվելով՝ զրկվել են բույսերին անհրաժեշտ սննդառու նյութերից, միենույն ժամանակ վատացել են նրանց ֆիզիկական դրությունը, վորը բռնկերի նորմալ զարգացման և լավ բերք առան։ Հիմնական պայմաններն են հանդիսանում։

Այս գրքույկի նպատակն է ծանոթացնել ոլորարտացման անհրաժեշտության հետ և այն մեծաքանակ պարարտացման նյութերի հետ, վոր մենք ունենք մեր տրամադրություն տակ և զորոնց վրա մենք մինչեւ այժմ պատշաճ ուշադրություն չենք դարձրել և անողութու կորել են, մինչդեռ նրանց կանոնավոր հավաքումը, պահպանումը և գործադրությունը պետք է լինի մեր հիմնական անելիքներից մեկը, վորպեսզի մենք հնարավորություն ունենանք մեր մեծ առաջնորդի առաջադրանքը անշեղորեն կատարել և ել ավելի բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծենք մեր վոռջ աշխատավորության համար:

Սակայն նախքան պարարտանյութերին անցնելը, համառոտ կերպով ծանոթանանք պարարտացման անհրաժեշտության հիմնական պայմանների՝ հողի մեջ տեղի ունեցող յերևութների և բույսերի սննդառոթյան հետ:

Այն հարցը, թե գոմադրը, ինչպես և այլ տեղական ծագում ունեցող, տնտեսության մեջ վորպեսթափուկներ առաջացող որդանական նյութերը մեզ մոռվորպես հիմնական պարարտանյութ ծառայել չեն կարող, վորովհետեւ մեր համարյա բոլոր շրջաններն եւ շատ չնշին բացառությամբ, անտառապուրկ են և իբր թե գոմադրն և հանդիսանում մեր աշխատավորության միակ վառելիքը, ընդհանուր տոմամբ ճիշտ չեւ

Նախ՝ մեր առորյա դիտողությունները ցույց են տալիս, վոր մեր յերկրում առաջացող ամբողջ գոմադրը չե, վոր վորպես վառելիք ե գործածվում, այլ միայն նրա մի վորոշ մասը, իսկ մնացածն անտեղի կորչում և և ապականում մեր գյուղերը, Շատ տեղերում դյուղերը

մաքրելու համար կամ աղքը հավաքում են և կույտեցով վառում, կամ թե չե լցնում են գետերը ու առուները և այդպիսով զրկում մեր դաշտերը նրանց բերքատվությունը բարձրացնելու հիմնական ազդակից:

Մյուս կողմից, այժմ արդեն գյուղատնտեսական սոցիալիստական վերակառւցման հետևանքով համարյա բոլոր կոլտնտեսություններում անասնականական ֆերմաներ ստեղծելուց և կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելուց հետո, մենք հնարավորություն ունենք գոմաղրի պատրաստումը, պահպանումն ու գործածությունը աացիոնալ ձեռվ կազմակերպելով, այդ արժեքավոր պարարտանյութն իր անմիջական նպատակին ծառայեցնել և մեր դաշտերի բերքատվառությունն իրեն պատշաճ բարձրության վրա դնել:

Այժմ մենք պետք ե ֆերմայի գոմերում կուտակվող ամբողջ գոմաղրն առանց կորստի գործադրենք բացառապես վորպես պարարտանյութ, իսկ կոլտնտեսականների անհատական ոգտագործության տակ դանվող անասունների աղքը և այն ել վոչ ամբողջովին, գործադրել վորպես վառելիք։ Այդ հանգամանքը ժիայն մեզ կտա հազարավոր տոնն շատ արժեքավոր պարարտանյութ, մեր ըույսերի համար անհրաժեշտ սննդանյութերով։ Բացի այդ, գոմաղրի աացիոնալ պարարտացումը մեզ հնարավորություն կտա համարյա կրկնակատկելու մեր գոմերում արտադրվող աղրի քանակը՝ անհրաժեշտ չափով ցամքար գործածելու միջոցով։

Քիչ չե նու մեր տնտեսությունների մեջ առաջացող այլ նյութերի քանակը, վորոնք մինչեւ այժմ մեր անուշաղիր վերաբերմունքի հետևանքով իզուր

աեղը կորել, վոչնչացել են, մինչդեռ այն խնամքով
հավաքելով և պահպանելով, մենք հնարավորության
կունենանք հազարավոր հեկտարներ պարաբռացնել և
նրանց բերքը լայն չափերով ավելացնել:

Որդանական կյանքի առաջացման և զարգացման
հիմնական վայրը հանդիսանում է հողը: Հողի մեջ
բույսերը գտնում են իրենց աճեցողության համար
անհրաժեշտ բուրր սննդատու նյութերը, բացի ածխած-
նից, վարը նրանք կլանում են անմիջապես ողից:
Բույսերի սննդառության համար անհրաժեշտ նյութերի
մեծ մասը, սննդատու աղերն առաջանում են հողում
մայր ապառների հողմնահարության հետևանքով, վորին
ավելանում են նաև ողից ծագող ազուր: Այս նյութերը
լուծվելով հողի ջրի մեջ, բույսերի արմատների միջո-
ցով անցնում են բույսին և ծառայում նրա սննդա-
ռության, նրա մարմնի կազմության համար:

Յեթե մի վորեե հողում բուսնող բույսերը մնում են
իրենց աեղը, ապա աշնանը մեռնում են, նրանց մար-
մինները քայլայվում են հողում և նրանց մեջ գտնվող
սննդանյութերը նորից մտնում են հողի մեջ և բույ-
սերի հետագա սերնդին վորապես սնունդ ծառայում:
Բայց այդ բույսերի մնացորդները քայլայման յեն-
թարկվելով, առաջացնում են հողի որգանական նյու-
թը—հումուսը, վորը, ինչպես հետո կտեսնենք, վճռա-
դական նշանակություն ունի հողի հատկությունների,
նրա բերքատվության համար: Այսպիսով բույսերի հե-
տագա սերունդն իրեն զարգացման համար ավելի լով
ուժիմաններ և գտնում, վորովհետեւ հողի սննդառա-
պերն արդեն լուծելի յեն դառնում, նրա ֆիզիկական
հատկությունները լավանում են և այսպիսով հետզ-

հետեւ այդպիսի հողերի վրա անող բույսերն ավելի
ուժեղ են զարգանում և ավելի մեծ քանակությամբ
որդանական նյութ արտադրում, վորի քայլայման
հետեանքով առաջացած մի շարք նոր նյութերի ազ-
դեցության տակ մայր առասի հողմնահարությունն
ել ավելի յէ արագանում և վերջինս ավելի մեծ քա-
նակությամբ սննդանյութեր եւ տրամադրում բույ-
սերին:

Սակայն այս յերեսույթն անմիջապես սկսվում է
փոխվել դեպի վատը, հենց վոր հողի վրա աճող բույ-
սերը հողի յերեսից հեռացվում էն, լինի դա հնձելով
հավաքելու միջոցով, լինի դա անասունների արածեց-
նելու միջոցով:

Այս դեպքում մենք բույսերի հետ ամեն տարի
հողից հեռացնում ենք վորոշ քանակությամբ սննդա-
տունյութեր եւ այդ աշխատանքը տարեցտարի անընդ-
հատ կատարելու հետեվանքով մենք հողն աղքատաց-
նում ենք, բույսերի սննդառության համար անհրա-
ժեղտ նյութերով։ Ամեն տարի հողմնահարության մի-
ջոցով բույսերին տրամադրվող նոր սննդանյութերը
այլևս չեն բավարարում բույսերի փարթամ աճեցու-
դության համար անհրաժեղտ սննդանյութերի պա-
հանջը, և հետզհետեւ բույսերի աճեցողությունը թուլա-
նում եւ, նրանց արտադրած որդանական նյութերի
քանակը պակասում, նրանց բերքը փոքրանում եւ:

Թե ինչ քանակությամբ սննդանյութ ենք մենք
վերցնում հողից ամեն տարի բույսերի բերքի միջո-
ցով, յերեսում եւ հետեւյալ տախտակից:

Рівність зварювання шовків.		Умови зварювання шовків		Залежність від температури		Залежність від температури	
з	у	з	у	з	у	з	у
$\zeta_{\text{звар}} / \zeta$	$U_{\text{звар}}$	$\zeta_{\text{звар}} / \zeta$	$U_{\text{звар}}$	$\zeta_{\text{звар}} / \zeta$	$U_{\text{звар}}$	$\zeta_{\text{звар}} / \zeta$	$U_{\text{звар}}$
$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$	$\sigma_{\text{звар}}$
$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$	$\Omega_{\text{звар}}$
$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$	$\eta_{\text{звар}}$
$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$	$\delta_{\text{звар}}$
$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$	$U_{\text{звар}}$
$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$	$S_{\text{звар}}$
$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$	$Q_{\text{звар}}$

Այս թվերը ցույց են տալիս թե յարաքանչյուր տարի վորպիսի մեծ քանակությամբ սննդանյութեր են վերցնում բույսերը հողից։ Պարզ է, վոր յեթե այդ նյութերը նորից պարարտացման միջոցով հողին չվերադարձնենք, ապա նա վորքան ել հարուստ լինի, ենտղիետե պետք եւ աղքատանա և այլնս բարձր բերք տալ չի կարող։ Յեվ իրոք՝ շատ տեղերում հենց այդպիս ել յեղել ե—հողերն ուժասպառ են յեղել, նրանց սննդատու նյութերը խիստ պակասել են և դրա հետեւ վանքով ել նրանք բարձր բերք տալ չեն կարողանում։

Բացի վերը նշված սննդանյութերից (աղոտ, ֆուֆոր, կուլի, կիր) բույսերին անհրաժեշտ ենակ ածխածին, թթվածին, ջրածին և մի շարք այլ նյութեր՝ ծծումբ, մազնեղիում, յերկաթ քլոր և այլն, վորոնց նկատմամբ բույսերի սկահանջն այնքան քիչ եւ և վորոնց քանակությունը հողում համեմատաբար այնքան շատ, վոր դրանց պահանջը չի զդացվում։

Վերը թված սննդանյութերից բույսերն ածխածինը վերցնում են ողից՝ այնաեզ գտնվող ածխաթթու գաղի ձեռվ։ Ածխաթթուն միջին հաշվով կազմում ե ողի 0,03 տոկոսը, վորն ամեն տարի հսկայական քանակությամբ կլանում են բույսերը և վորը դարձյալ վերականգնվում ե ողում զանազան աղբյուրներից։ Այդ աղբյուրներից ամենահիմնականը հանդիսանում ե հողը, վորը տալիս ե ամեն տարի ողին վերադարձող ածխաթթվի մոտ 90 տոկոսը։ Թթվածինը և ջրածինը բույսերը վերցնում են հողից, նրա մեջ գտնվող ջրի ձեռվ, իսկ աղոտը և մնացած այսպիս կոչվող մոխրային նյութերը բույսերը վերցնում են դարձյալ հողից, ջրի մեջ լուծված աղերի ձեռվ։

Այսպիսով, մեր հիմնական տնելիքն և, հողի պարագացման միջոցով հողի միջի բույսերի համար անհրաժեշտ նյութերի քանակությունը բարձր պահել, վորպեսզի նրանք ապահովված լինեն սննդանյութերով և բարձր բերք տան:

Բացի այդ անհրաժեշտ սննդանյութերի՝ առկայությունից անհրաժեշտ են նաև, վոր ողն իր վորոշ հատկություններով նպաստավոր լինի բույսերի աճեցողության համար և միշտ պահպի այդպիսի նպաստավոր պայմաններում։ Այդպիսի նպաստավոր ֆիղիկական պայմաններ ստեղծելը հանդիսանում է հողի մշակության հիմնական նպատակը։ Սակայն հողի մշակության միջոցով այդ նպաստավոր պայմաններն առաջացնել ավելի հեշտ ու կատարյալ ե լինում, յեթե հողի մեջ, բացի նրա հիմնական բաղադրիչ մասը կազմող կավից, ավտողից և սննդառու աղերից, կան նաև վորշ քանակությամբ որգանական նյութեր՝ օնոմուսունակությունունը բուսական և կենդանական ծագութ ունեցող կիսաքայլայի որգանական նյութ ե, վար հողի բերքատվության համար ունի վհառդական նշանակություն։

Հումուսը հանդիսանում է հողի ամենաանկայուն մասը։ Նա անընդհատ փոփոխության և յենթարկվում, քայլքայվում ե, վեր և ածվում անորգանական նյութերի և անընդհատ նոր առաջանում։ Հումուսի առաջցումն ու քայլքայումը ղեկավարելու հանդիսանում է հողի պարագացման հիմնական նպաստակներից մեկը։ Անհրաժեշտ ե պարագացման և ցանքաշրջանառության միջոցով հողի մեջ անքան որգանական նյութ մտցնել, վոր նրա քանակը հողի մեջ վոչ միայն չպա-

կասի, այլ նաև վորոշ ղեաքերում նույնիսկ ավելանա, վորովհետեւ, ինչպես ասացինք, հումուսի դերը հողի բերքատվության գործում շատ մեծ է,

Վո՞րն եւ հումուսի նշանակությունը հողի բերքատվության գործում:

1. Հումուսը հանդիսանում է վօրպես բույսերի սննդանյութերի տեսմարան: Բանն այն է, վոր հումուսի իր մեջ բացի ածխածնից, ջրածնից և թթվածնից պարունակում եւ նաև ազոտ, վորպիսի աղոտը հումուսի քայլքայման հետեւանքով վեր եւ ածկում ազոտի անորդանական միացությունների՝ ամոնիակի և ազա ազոտական թթվի աղերի, վորոնք և ծառայում են կանաչ բույսերի համար վորպես ազոտային սննդի աղոյուր: Մյուս կողմից՝ հումուսը չնորհիվ իր վորու ֆիզիկո-քիմիական հասկությունների (կոլոիդ) հողի լուծույթից կլանում եւ նրա միջի աղերը և այդպիսով պաշտպանում նրանց, ինչպես և ազ տի անորդանական միացությունները, լվացվելուց, հողից անոգուած հեռացվելուց: Յեզ յերբ բույսերի սննդառության հետեւանքով հողի լուծույթի միջից այդ աղերը պահպառվում են, այն ժամանակ հումուսի կլանած աղերն աղատվում են, մտնում լուծույթի մեջ և արամաղըքվում բույսերին: Այսպիսով, հումուսը հանդիսանում է բույսերի սննդառության գանդաղ, սակայն մզտապնակ հոսող աղբյուրը:

2. Վերն ասացինք, վոր ողի մեջ մտնող ածխաթթվի մոտ 90 տոկոսը առաջանում է հողից, իսկ ածխաթթուն հանդիսանում է վորպես բույսերի սննդառության հիմնական նյութերից մեկը: Փորձերը ցույց են տվել, վոր ողի մեջ գտնվող 0,03 տոկոս ածխա-

թթուն յեթե ավելացնենք՝ ավելանում և նաև հողի քերքը, իսկ ամբողջ ողի միջի ածխաթթուն նշմարելի քանակությամբ ավելացնելն անհնարին բան և։ Սակայն յեթե ամբողջ ողի ածխաթթուն անկարելի յե ավելացնել, նրա քանակը կարելի յե ավելացնել ողի այն մասում, ուր գտնվում են բռւյսի ածխաթթու կլանող որդանները, կանաչ ցողուններն ու տերևները։ Ահա սա ինչպես և տեղի ունենում։ Հողի միջի որդանական նյութերն անընդհատ քայլայվում են հողի մեջ ապրող մանր եակների՝ բակտերիաների և սնկերի միջոցով և վեր են ածվում ածխաթթվի, ջրի և ամոնյակի։ Ջուրը և ամոնյակը մնում են հողի մեջ, իսկ ածխաթթու գաղի մեծ մասը դանդաղարեն զուրս և գալիս հողից և զատ դանդաղ բարձրանում դեպի վեր։ Գաղի այդ վերելքին խանգարում են կանաչ բռւյսերը, վորոնք ծածկում են հողի յերեսը, փակելով գաղի ճանապարհը։ Ողի հենց այդ մասումն ել ածխաթթու ավելի շատ և լինում, քան բռւյսերի վրայի մասում։ Այդուհից ել հենց բռւյսերն իրենց տերևների միջոցով կլանում են ածխաթթուն։ Ուրեմն վորքան նողի մեջ որգանական նյութեր եատ լինեն, այնին ել նրանք եատ կտյալային յեկ այնին ել եատ ածխարքու դուրս կդա հողից, այնին ել բռւյսերն ավելի եատ ածխարքու կկլանեն յեկ բերքն ել մեծ կլինի։

3. Հումուսը նպաստում է մայր տպաների նողմանահարման զործին։ Բանն այն ե, վոր ապառների հողմնահարման պրոցեսում մեծ դեր ե կատարում ջուրը, լուծելով տպառների մեջ գտնվող սննդատու աղերը։ Սակայն մաքուր ջրի լուծելու ընդունակությունն այնքան ել մեծ չե, ուստի նա քիչ քանակու-

թյամբ աղեր կարող ե լուծել Բայց յեթե ջրի մեջ
ածխաթթու յե գտնվում, ապա նրա լուծող ընդունա-
կությունն անհամեմատ մեծանում եւ Յեթե հողի մեջ
ածխաթթու շատ ե առաջանում, ապա ջրի մեջ դանը-
վող ածխաթթվի քանակությունը մեծանում եւ և նա
ապառներից ավելի շատ աղեր ե լուծում և բռյաների
տրամադրության տակ դժուվող աղերի քանակու-
թյունն ավելանում ե, դրա հետևանքով բերքն ավելի
մեծանում եւ:

4. Հումուսն ազդում ե նայելի հողի ֆիզիկական
դրության վրա, ըստ վորում հումուսով հարուստ հողերի
ֆիզիկական դրությունն ավելի նպաստավոր ե բռյ-
աների զարգացման համար: Հայտնի յե, վոր ավազա-
յին հողերն իրենց մեջ ջուր չեն պահում՝ իրենց փուխր
դրության հետևանքով: Յեթե մենք ավազոտ հողի
հումուսն ավելացնում ենք, ապա նրա մասնիկները
կպչում են միմյանց, հողն ավելի կպչուն ե գառնում
և դրա հետևանքով նրա ջուր պահելու ընդունակու-
թյունն ավելանում ե: Ըստհակառակը, կավային հողերն
իրենց խտության հետևանքով ջրի համար անանցանելի
յեն դառնում ե բռյաների արմատներն ել մեծ դժվարու-
թյամբ են մտնում այդպիսի հողերի մեջ ե վատ են
աճում: Յեթե մենք ծանր կավային հողերի հումուսն
ավելացնում ենք, ապա նրա մանր մասնիկները կպչում
են միմյանց և այդպիսով առաջանում ավելի մեծ
մասնիկներ—կնձիկներ, հողի ծակոտկենությունն ավե-
լանում ե, նրա մեջ ող շատ ե մտնում, նրա ողափո-
խությունն—աերացիան մեծանում ե և բռյաների ար-
մատներն ել թե հեշտությամբ են մտնում հողի մեջ և
թե անհրաժեշտ ողով ու ջրով ապահովված են լինում:

5. Հումուսը մեծացնում ե հողի ջաւա պահելու ըն-

դրւնակությունը, մի հանգամանք, վորը շատ կարեսը և
մանավանդ Խորհրդային Հայաստանի համար, վորն
ընդհանուր առմամբ չոր կլիմա ունեցող յերկիր է, և
վարտեղ հաճախ բերքը շատ ցածր է լինում ջրի պակա-
ռության հետևանքով։ Առհասարակ պետք է ասել, վոր
հողի բերքատվության գործում Խորհրդային Հայաս-
տանում բույսերին ջրով ապահովելու խնդիրը առաջ-
նակարգ նշանակություն ունեցող խնդիր է և բարձր
բերք ստանալու համար մենք պետք է ամեն միջոց գործ
դնենք և հողի մեջ յեղած ջրի քանակն ավելացնենք։
Այդ միջոցներից մեկն ել հողի հումուսի քանակի ավե-
լացումն և պարարտացման միջոցով, ինչպես յերեսում
և հետեւյալ թվերից՝

Հողի ցրի բանակը

	Հողի խորությունը	
	30 սանտի- մետը	60 սանտի- մետը
Դամաղբով պարարտացը մեջ	19,88 տոկ.	19,79 տոկ.
Բանց գոմաղբի	18,79 >	19,33 >
Ցարբերաթյունը	+1,09 >	+0,46 >
Տոններով հեկտարին	32,7 >	18,8 >

Այսպիսով տեսնում ենք, վոր հողի հաւմառը
հսկույական նշանակություն ունի նրա քիմիական և
ֆիզիկական հատկությունների, հետեւապես և նրա
բերքատվության համար։

Ի՞նչ միջոցներով կարելի յէ այդքան կարեսը հու-
մուսի քանակն ավելացնել։ Հողի հումուսի աղբյուրներն
են՝ 1. բույսերի մասուրդները—արմատները, չորացած

տերենները և այլն և 2. որդանական սլարաբանյութերը և առաջին հերթին գումաղը:

Ինչ վերաբերում է բերքի մնացորդներին, ապա պետք է ասել, վոր տարբեր բույսեր իրենցից հետո տարբեր քանակությամբ որդանական նյութեր են թողնում հողում, ինչպիս այդ յերեսում է հետեւյալ տախտակից:

Աշխան աշուա	1986	կլոպրամ չոք նյութ հելտարին
Աշխան ցորեն	2027	> > > >
Վարուկ	2110	> > > >
Դարի	1338	> > > >
Դարնան ցորեն	1332	> > > >
Առվույտ	10811	> > > >
Կորնդան	6632	> > > >

Այս թվերը ցույց են տալիս, վոր ընդհանուր առամբ թիթեռնածաղկավոր բույսերն ավելի շատ որդանական նյութեր են թողնում հողի մեջ, քան հացահատիկները, հետեւապես հողն որդանական նյութերով հարստացնելու տեսակետից առաջիններն ավելի լավ են, քան վերջինները, ուստի հողը հումուսով աղքատանալու առաջն առնելու համար անհրաժեշտ է, բայց որդանական պարարտանյութերով պարարտացնելուց, կիրառել նաև կանոնավոր ցանքաշրջանառություն, լայն չափերով կիրառելով նրա մեջ թիթեռնածաղկավոր կերարույսերի մշակությունը:

Թեև թիթեռնածաղկավոր բույսերը հողը հումուսով հարստացնելու տեսակետից մեծ դեր են խաղում, սակայն հողի բերքատվությունը բարձրացնելու համար նի կարելի բավարարվել միմիայն դրանց մշակությամբ, անհրաժեշտ է լայն չափերով անցնել նաև որդանական տեղական պարարտանյութերի գործածությանը:

Միայն սրանք են, ուոր ապահովում են վոչ միայն հողի
հումուսով հարստացումը, այլև սննդանյութերով,
առաջին հերթին՝ ազոտով, ֆոսֆորով և կալիումավ
հարստացումը:

Այժմ անցնենք որգանական՝ տեղական պարար-
տանյութերի պատրաստման, պահպանման և գործա-
ծության նկարագրությանը:

1. ԳՈՐԾԱՀԱՅԻ

Տնտեսության մեջ ստացվող որգանական պարար-
տանյութերից թե իր քանակի և թե վորակի տեսա-
կետից ամենակարևորը հանդիսանում է գոմաղրը՝
Գոմաղրն ընտանի կենդանիների թրիքի, մեղի և
շրանց տակ փախող ցամքարի խառնուրդն ե, վորք
վորոշ ժամանակ պահպելուց և անհրաժեշտ փոփոխու-
թյունների յենթարկվելուց հետո գործ և ածվում
վորպիս պարարտանյութ:

Գոմաղրի կազմությունն ու արժեքը կախված ե
վերը բերած յերեք բաղկացուցիչ մասերի կազմու-
թյունից և այն փոփոխություններից, վոր տեղի յե-
ռանենում նրա մեջ՝ նրա պահպանուան, հասունացման
ժամանակ, ուստի նախ ծանոթանանք այդ բաղկացու-
ցիչ մասերի կազմության և նրա մեջ տեղի ունեցող
փոփոխությունների հետ:

Կենդանիների պինդ արտաթորությունները կամ
թրիքը բաղկացած ե կենդանու կերած կերի չմարսված
մասերից, բակտերիաներից և կենդանու ստամոքսի և
աղիքների հյուսվածքների մեռած բջիջներից ու հյու-
թերից: Վորովհետեւ տարբեր կենդանիներ տարբեր
կերեր են ուտում, նրանց մարսողության որգանների

մարսող ուժը տարբեր է, ուստի նրանց արտաթորությունների կազմը ևս տարբեր է, ինչպես այդ յերեսում և հետեւյալ տախտակից:

ԱԵՆԴԱԲԻՑԵՐԻ ՐԵՒՄԻ ԿԹՎՄՈՒՐՅՈՒՆԸ (ՏՈԼՈՅՆԵՐԸ)

	Զ	Ռոգանական նույնական	Աղու	Ֆուֆուրու- թյուն	Կակ	Կիր	Քլար
Տավարի	80,0	18,0	0,30	0,20	0,10	0,10	0,01
Չին. շ.	75,0	23,0	0,55	0,30	0,33	0,23	0,01
Հոչխորի	68,0	29,0	0,60	0,30	0,20	0,40	0,10
Խոզի	82,0	16,0	0,60	0,50	0,40	0,05	0,01

Ինչպես տախտակի թվերը ցույց են տալիս, ամենաջրիկ արտաթորությունները խողինն են, ապա գալիս են տավարինը և ձիռնը. ամենաքիչ ջուր պարունակողը վոչխարինն է. Սննդանյութերի տեսակետից ամենահարուստը՝ խողինը, վոչխարինը և ձիռնն են, իսկ տավարինը համեմատաբար աղքատ են թե աղուտով, թե ֆուֆուրով և թե կալիով. Այս թվերը, ի հարկե, անփոփոխ մեծություններ չեն, այլ փոփոխում են թե ըստ կենդանու հասակի և թե ըստ նրա կերած կերի. Մատղաղ անասունների աղը համեմատաբար սննդանյութերով ավելի աղքատ են, ինչպես նաև սթերատուններինը, քան ըանող անասուններինը. Մյուս կողմից՝ ավելի զատ խտացրած կերով (քուսպ, թեփ, հատիկ և այլն) սնվողներն ավելի հարուստ են սննդանյութերով, քան կոպիտ կերով (խոտ, դարձան և այլն) սնվողները:

ԱՆԱՀԱՅԻ ԱԿՏԻ ԱՆԴԻ ԽԵՏԱՎՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՑՐ (0/0/0-00)

	σ_{eff}	Արդարացնելու հայտնի	Աղոթ	Ջումուկություն	Կառավար	Կառավար	ρ_{eff}
Տավարի	92,5	8,0	1,00	0,10	1,50	0,03	0,10
Չիռու	89,0	7,0	1,20	0,05	1,50	0,15	0,30
Վաշինգտոնի	87,5	8,0	1,50	0,10	1,80	0,30	0,38
Խոզի	94,0	2,5	0,50	0,05	1,00	0,02	0,10

Հստ մեղի ջրիկության և առաջին տեղը բռնում է խողի մեղը, ապա առավարինը, ձիունը և ամենաշատ չոր նյութեր պարունակում են դարձյալ վոչխարինը։ Աննդանյութերով հարուստ լինելու տեսակետից պետք է տաել, վոր մեղի միջի ազուրը մի քանի անգամ ավելի ջատ է, քան թրիքի միջինը։ Նույնը վերաբերում է նաև կալիումին, մինչդեռ ֆոսֆորը թրիքում աւելի շատ է գոնվում, քան մեղում։ Իսկ առհասարակ սննդանյութերի պարունակության տեսակետից առհաճարուստը վոչխարի մեղն է, իսկ ամենաազգայի խողինը։

Ռացիոնալ գումարը պատրաստելու տեսակետից անհրաժեշտ է գոմազրին խառնել նաև ցամքար, վորի նպատակն է կենդանիների արտաթորությունների հեղուկը ոլահպանել, վորով ավելանում է թե գոմազրի արժեքը և թե նրա քանակը։ Բացի այդ, ցամքարը կենդանիների տակը չոր և փափուկ է պահում։

Վարպես ցամքար գործ է ածվում սովորաբար աշնանացան հացահատիկների ծղոտը, իսկ վերջինիս

բացակայության դեպքում՝ նաև տորֆ, փայտի թեփ կամ ծառերի չորացրած տերևներ և այլն. Ամենից լավը ծղոտն ու տորֆն են, վորոնք մեծ քանակությամբ հեղուկ են ծծում իրենց մեջ. այսպիս՝ հացահատիկների 100 գրամ չմանրացած ծղուը ծծում է 240 խոր. սանտիմետր հեղուկ, իսկ մանրացրածը՝ 265 խոր. սանտիմետր, տորֆը՝ 900 խոր. սանտիմետր, փայտի թեփը՝ 357 խոր. սանտիմետր:

Վորպիս ցամքար գործածվող նյութերը պարունակում են իրենց մեջ հետևյալ սննդանյութերը ($^{\circ}/_{\circ}/_{\circ}$ -ով):

	$U_{\text{զատ}}$	$\frac{\text{ծառափություն}}{\text{Եթու}}$	$q_{\text{այլ}}$	$h_{\text{լր}}$
Աղոտային ծղու	0,6	0,8	1,0	0,3
3 - ը Փ	0,6	0,1	0,1	0,3
Փայտի թեփ	0,2	0,1	0,2	0,8

Իսկ այդ յերեք նյութերի՝ թրիքի, մեղի և ցամքարի խառնուրդից պատրաստած զոմակըն ունի հետևյալ կազմը (տոկոսներով):

Գոմաղբի հասակը	$U_{\text{զատ}}$	$\frac{\text{ծառափություն}}{\text{Եթու}}$	$q_{\text{այլ}}$	$h_{\text{լր}}$	$U_{\text{աղջկեց}}$	$U_{\text{գոմաղբ}}$	χ
Թորմ	21	0,45	0,20	0,60	0,45	0,14	0,10
3 - 5 ամսավա	17	0,54	0,25	0,70	0,60	0,18	0,18

Այսպես ուրեմն գոմաղբն իր մեջ պարունակում է միջին հաշվով՝ 20 տոկոս չոր նյութ, վորից 5 տոկոսը ժոխային նյութերն են։ Ինչպես թվերը ցույց են տալիս, գոմաղբի մեջ գտնվում ե բույսերի ըուռ գլխավոր սննդանյութերը, մի հանգամանք, վոր գոմաղբն ավելի արժեքավոր ե դարձնում։

Ինչ վերաբերում ե գոմաղբի քանակին, ապա պետք ե ասել, վոր հաշիվները ցույց են տալիս, վոր յուրաքանչյուր դլուխ անասունին որական 3—4 կիլոգրամ ցամքար տալու դեպքում, 500 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող տավարը միջին հաշվով տալիս ե տարեկան 100—125 ցենտներ գոմաղբ, ձին 70—80 ցենտներ, վոչխարը՝ 9 ցենտներ և խոզը՝ 18—20 ցենտներ։ Յենելով այս միջին թվերից, մենք գալիս ենք այն յեղրակացության, վոր Խորհրդային Հայաստանում գոմաղբը խնամքով հավաքելու և պահպանելու դեղում իստացվի միջին հաշվով մոտ 1.650.000 տոնն (հաշվումը կատարված ե տարեկան 180 որ գոմաղբ պահելու ժամանակաշրջանի համար), վորի մեջ գտնվում ե։

Որդանական նյութեր	33.000	տոնն
Ա պ ա ա	8.250	»
Ֆ ս ս ֆ ո բ	11.550	»
Կ ի բ	9.900	»

Վորի միջին միայն աղոտը համապատասխանում է 41.250 տոնն ամոնիում-սուլֆատի կամ կալցիում-ցիանամիզի, իսկ ֆոսֆորը՝ 27.225 տոնն 15 տոկոսանոց սուլերֆոսֆատի։ Այս պարագանյութերի ռացիոնալ ոգտագործումը մեզ կտար առնվազն հացանատիկի բերքի մոտ 82.500 տոնն հավելում (Հայաստա-

Նի քիմիացման կայտնի փորձերը ցույց են տվել, Վոր Խ. Հայաստանում ազոտի մեկ միավորը հացահատիկաների բերքն ավելացնում է 10 միավորով):

Գոմաղբի հասունանալը

Գոմաղբը թարմ դրությամբ, վորպես պարարտանյութ գործածելու դեպքում փոխանակ հողի բերքն ավելանալու, հաճախ պակասում է: Դրա պատճառն այն է, վոր, ինչպես անալիզները ցույց են տալիս, թարմ գոմաղբն իր մեջ անհամեմատ ավելի շատ ածխածնային որդանական նյութեր և պարունակում, քան ազոտային, ըստ վորում այնտեղ գտնվում են բավականին մեծ քանակությամբ լուծվող ածխաջրատներ՝ շաքարներ և ոսլա: Իսկ մենք գիտենք, վոր յեթե մենք մեծ քանակությամբ ածխածնային նյութ ենք մտցնում հողը, ապա հողի մեջ գտնվող միկրոօրգանիզմները՝ ըակտերիաներն ու սնկերը արագությամբ բաղմանում են: Յեվ վորովհետեւ նրանց բաղադրանալու համար, բացի ածխածնային նյութերից, անհրաժեշտ են նաև ազոտային նյութեր, ուստի նրանք իրենց բազմացման համար ոգտագործում են հողի մեջ գտնվող ազոտի լուծվող միացությունները՝ ամոնիումի և ազոտական թթվի աղերը և լարձնում այդ՝ իրենց մարմինը կազմող սպիտակուցային նյութեր և այդպիսով կանաչ բույսերին զրկում են ազոտի այդ անհրաժեշտ միացություններից: Դրա հետեւանքով ել կանաչ բույսերն ազոտի մատչելի միացությունների պակասության հետեւանքով վատ են աճում և քիչ ել բերք են տալիս, թեև հողի մեջ այդ դեպքում ազոտը

շատ և լինում, սակայն նա համարյա ամբողջապես
վեր և ածվում որդանական նյութերի, վորոնք, ինչ-
պես գիտենք, կանաչ բույսերի համար բոլորովին ան-
մատչելի յեն: Վորպեսպի այդ բանը տեղի չունենա և
գոմաղըն իր լրիվ ազդեցությունը յերեան բերի հենց
առաջին տարին, անհրաժեշտ և նրան վորոշ ժամանակ
պահել հատուկ աղբանոցներում, վորի ընթացքում
նրա մեջ տեղի յե ունենում մի շաբք որդանական
նյութերի քայքայում և փոփոխություններ, վորից
հետո արդեն գոմաղը կարելի յե առանց յերկյուղի
մացնել հողի մեջ: Սակայն նյութերը այնքան ել շատ
չպետք ե քայքայվեն, վորովհետեւ գոմաղըն ազդում ե
վոչ միայն իր սննդառու նյութերով, այլև որդանա-
կան նյութերով, ուստի գոմաղը քայքայումն այնքան
շատ չպետք ե տեղի ունենա, վորպեսպի մեծ քանա-
կությումը որդանական նյութ չքայքայվի, այլ քայ-
քայվեն նրա վորոշ մասերը, այսինքն՝ այն որդանա-
կան նյութերը, վորոնք ամենից շատ են նպաստում
միկրոօրդանիզմների արագ բազմացմանը, այն ե լռեծ-
վող ածխաջրատները, շաքարները և ոսլան: Գոմաղըն
հասունացման նպատակն ըստ Լյոնինիսի կայանում ե
նրանում, վոր «Նախ» որդանական նյութերն այնքան
քայքայվեն, վոչ ավելի շատ, վորքան հարկավոր ե,
վորպեսպի նրանք վոչ կուլտուրական բույսերին և վոչ
ել աղոտական թթու առաջացող բակտերիաներին միա-
սն և վոչ ել ամոնիումի և աղոտական թթվի աղերը
յուրացնող բակտերիաների բազմացման համար նպաս-
տագոր ածխածնային նյութեր մտակարարեն: Յերկ-
բորդ՝ սկզբից որդանական նյութերի մեջ գտնվող
ազդուի մի մասը ոկտոք ե այնքան քայքայվի, վոր

գոմազրը հողը մացնելուց հետո անմիջապես սկսվի նրա նիտրիֆիկացիան (աղոտային թթու առաջանալը)։

Գոմազրի փոփոխությունները նաև նացման ընթացքում։ Խնչպես ասացինք, թարմ գոմազրի ածխածնային նյութերը բաղկացած են գլխավորապես թաղանթայութերից (ցելուլոզ և լիզնին), պեկտինային նյութերից և լուծվող ածխաջրատներից (շաքար և սուլա)։ Եայսծ թե գոմազը ինչ պայմաններում և պահպանման մեջ պահպանման արդարացման նյութերը ելայս որպանական նյութերից շատ կամ քիչ քանակությամբ են քայլայվում, ինչպես այդ յերեսմամբ և հետեւյալ փորձից (տոկոսներով)։

Ա ն ո ւ ս տ ն ե ր	Ա ն ո ւ ս տ ն ե ր (ո դի մեջ)		Ա ն ո ւ ս տ ն ե ր (առանց ո դի)	
	150	350	150	350
Պրոպանական նյութ.	11,8	39,4	3,6	34,0
Գննադաններ	18,6	62,8	9,4	59,6
Ցելուլոզ	0	75,0	համար. 0	կորուսա

Այս թվերը ցույց են տալիս նախ՝ վորքան աղբակույտի ջերմաստիճանը բարձր եւ, այնքան ել որդանական նյութը շատ եւ քայլայվում է կորուսատներն ել մեծ են լինում և ընդհակառակը, ցածր ջերմաստիճանի տակ որդանական նյութերի կորուսատն ավելի փոքր եւ։ Մյուս կողմից՝ քայլայման արագությունն ու կորուսատների մեծությունը կախված է գոմազրի միջի ո դի քանակից։ Վորքան աղբակույտի մեջ շատ եւ լինում (աերոր պայմաններ), այնքան ել շատ որդա-

նական նյութեր են քայքայվում, թե ցածր և թե
բարձր ջերմաստիճանի տակ և վորքան ողը քիչ ե
լինում (անաերոր պայմաններ), այնքան ել նյութերի
քայքայումը փոքր է. Բացի այդ, փորձերը ցույց են
տվել, որ որգանական նյութերի քայքայումը չոք
զոմաղրում ավելի մեծ չափերով ե տեղի ունենում,
քան թացում, այսպիս,

Ե ՞ Ր Ա Խ Ա Զ	Ջ Ա Խ Ա Յ	
	30 առկա	85 առկա
Չոր նյութ	38,5	85,7
Դենտոգաններ	71,1	55,8
Թաղանթանյութ	53,2	41,1

Հետեւակես, վորպեսզի կորուստներ քիչ լինեն, ան-
հրաժեշտ ե զոմաղրը պինդ դարսել, վոր աղբի մեջ
անաերոր պայմաններ ստեղծվեն և ջուրն ել շատ լինի:
Հակառակ դեպքում, թույլ փոած և համեմատաբար
քիչ ջուր պարունակող զոմաղբն ուժեղ կերպով տո-
քանում ե, նրա ջերմաստիճանը հասնում ե յերբեմն
մինչև 70°C . Այդ տեղի յեռնենում շնորհիվ բակտե-
րիաների գործունեյության, վորոնց թիվը մեկ գրամ
թարմ գոմաղրում 10-ից 20 միլիարդից յեռնում:
Սակայն լավ գոմաղր առանալու համար բակտերիա-
ների շատությունը կարեռ չե, ընդհակառակը, վոր-
քան նրանց թիվը փոքր լինի, այնքան լավ, վորովհե-
տեւ այնքան որդանական նյութեր քիչ կքայքայվեն:
Ինչ վերաբերում ե լուծվող որգանական նյութերին՝
չաքորներին և ուլային, ապա նրանց քայքայումը

գոմաղբում տեղի յե ունենում լրիվ, վորի հետեանքով
ել վերանում և այն մասսակար ազդեցությունը հողի
վրա, վոր նկատվում և թարմ գոմաղբի զործածության
հետեանքով

Ինչ վերաբերում և գոմաղբի ազոտային նյութե-
րին, ապա պետք և ասել, վոր թրիքի ազոտի մոտ-
ենում գտնվում և չմարսված կերի մեջ, վորպես դժվար
քայլքայվող, բարդ սպիտակուցային նյութերի բաղկա-
ցուցիչ մասը։ Մեզի միջի ազոտի խոշորագույն մասը
կազմում և միզանյութը, վոր շատ հեշտությամբ
քայլքայվում և վերածվում ամոնիակի։ Զոր և թույլ
դարսված գոմաղբի մեջ միզանյութի ամոնիակի վե-
րածվելը շատ արագ և կատարվում և լրիվ։ Յեկ վո-
րովինեան ամոնիակը ցնդվող նյութ և, ուստի այդ
պայմաններում ազոտի կորուստը շատ մեծ չափեր և
ընդունակ։ Ուստի այս տեսակետից ևս շատ կարևոր
է, վոր գոմաղբը պինդ դարսած և խոնավ պահպի։ Հե-
տեւապես, լավ պահպող գոմաղբի ամոնիֆիկացիան
այնքան ել ուժեղ չի կատարվում և ազոտի կորուստ-
ներն ել քիչ են տեղի լինում։ Ինչ վերաբերում և
սպիտակուցային նյութերի մեջ գտնվող ազոտին, ապա
սա ել վորոշ շափով փոփոխության և յինթարկվում։
Վորի հետեանքով այդ ազոտի մի մասը, սպիտակուց-
ների քայլքայման հետեանքով, հողի բակտերիաների
համար ավելի մտածելի յե դառնում և հեշտությունը
հողում քայլքայվում և վեր և ածվում ամոնիակի։
Վորն իր հերթին արագորեն ազոտական թթվի աղերի
և վերածվում հատուկ բակտերիաների միջոցով և կա-
նաչ բույսերին վորպես սնունդ ծառայում։

Այսպես, ուրեմն՝ լավ գոմաղբ սառնալու համար

պետք և անպայման գործածել ցամքար, վորը փռում
են կենդանիների վոտների տակ, թե նրանց տակը
չոր և փափուկ պահելու և թե կենդանիների թրիքն
ու մեզն իրենց մեջ պարունակվող սննդանյութերի
հետ միտսին լրիվ հավաքելու համար։ Այնուհետև
ազրը պետք է տեղափոխել հատուկ աղբանոցի մեջ,
վորը պետք և պատրաստել գոմի մոտ փոս փորելով,
վորի պատերն ու հատակը պետք է անթափանցիկ
լինեն հեղուկների համար, վորպեսզի այդ ճանապար-
հով և զուկը չծծվի և նրա մեջ լուծված սննդանյու-
թերը չկորչեն։ Ազրանոցն անպայման պետք և ծած-
կի տակ գտնվի, վորպեսզի արևն ու անձրևները նրա
վրա չաղղեն, նա չչորանա, կամ շատ չթրջվի։ Յեթե
այսպես պահպող գոմաղբի յերեսը շուտ և չօրանում,
ապա այն պետք է ժամանակ առ ժամանակ թրջել,
նրա միջի ջրի քանակը մոտավորապես 75—80 տո-
կոսի չափ ողաճպահնելու համար։ Ազրանոց տեղափոխած
գոմաղբն ամենառշը յերկու որից հետո պետք է ան-
պայման պինդ սղմել, վորպեսզի նրա մեջ անտերոք
պայմաններ ստեղծվեն և որդանական նյութեր։ Կո-
րուստ քիչ տեղի ունենա և առնասարակ պետք է
ասել, վոր վորքան գոմաղբը պինդ և դարսված, այն-
քան նա ավելի լավ և և նրա աղդեցությունն ուժեղ։
Յեթե մենք գոմաղբ պատրաստելու վերը նկարագրած
ձեզ համեմատենք Խորհրդային Հայաստանում գոյու-
թյուն ունեցող դրության հետ, ապա մենք կտեսնենք,
թե վորքան վոչ ռացիսնալ ձեռվ ենք ողաճում մէնք
մեր գոմաղբը։ Մեզ մոտ սովորաբար գոմաղբը հավա-
քում են առանց ցամքարի, վորի հատեանքով նրա
սննդանյութերի մեծ մասը կորչում է, հատկապես

մեզը և նրա մեջ դանվող ազոտը, զորի մեծագույն
մասն ամռնյակի վերածվելով, ցնղում է ողը, Այսու
մասն ել հեղուկի մեջ լուծված գրությամբ և կորչում
հոսող մեղի հետ։ Այնուհետեւ աղբը գոմից հանում են
և թափում դուրսը, բաց յերկնքի տակ, առանց փոսի
և առանց կույտ պատրաստելու։ Արել և անձրևն այս-
ուղղ լրիվ կիրապով հայտարերում են իրենց բացասա-
կան ազդեցությունը։ Արել չորացնում է պուազը,
նրա մեջ տեղի ունեցող քայքայումներն ուժեղանում
են, և բացի մեղից կորած սննդանյութերից, վոչնչա-
նում, կորչում և նաև որգանական նյութերի մեծ մասը։
Անձրևները պակաս ազդեցություն չեն ունենում այդ-
պես հավաքած գոմաղբի վրա։ Ամեն անզամ կարելի
յե տեսնել, թե ինչպես անձրևից հետո աղբակույտի-
վրա, նրա խորդուրորդությունների մեջ փոքրիկ
լճակներ են առաջանում, թե ինչպես աղբակույտից
փոքրիկ մուգ-շագանակագույն առվակներ են հոսում։
Այդ աղբակույտից դուրս յեկող մուգ գույնի հեղուկն
իր հետ առանում է վոչ միայն գոմաղբի բոլոր լուծվող
սննդանյութերը, այլև նրա սիջի սպիտակուցային
նյութերը, վորոնք հեղությամբ լուծվում են ամո-
նիակ պարունակող ջրի մեջ։ Յեկ վորովհետեւ թույլ
դարսած գոմաղբի մեջ բավականին մեծ քանակով
ամռնիակ ե առաջանում, ուստի այդ ամռնիակն անսի-
ջապես լուծվում է ջրի մեջ, իսկ վերջինս ել իր հետ-
ուծում և գոմաղբի սպիտակուցային նյութերը և հենք
այդ պատճառով ել գոմաղբից հոսող ջրերը մուգ գույն-
են ունենում։ Բացի այդ, որգանական նյութերի ուժեղ
քայքայման հետեւանքով նրա մեջ առաջանում են նաև
մեծ քանակությամբ լուծվող ֆուֆորաթթվի և կա-

զիումի աղեր, վորոնք նույնպես դուրս են գոլիս ջրի հետ և կորչում։ Այսպիսով գոմաղրի վատ հավաքելու անկանոն պահելու հետեանքով կորչում են նրա միջի սննդանյութերի, հատկապես ազոտի 60—70 տոկոսը. վորն իրենից հսկայական արժեք են ներկայացնում և այսպես պահպաժ գոմաղրը դաշտում շատ չնշին եթեկտ եւ տալիս:

Այժմ մեր խորհանտեսությունները և կոլտնտեսությունները հսկայական քանակությամբ կուլտուրական գոմեր են կառուցում, բայց այդ գոմերից են վոչ մեծն ել աացիոնալ ազբանոց չունի. անհրաժեշտ է գոմերի հետ միաժամանակ նաև աղբանոցներ կառուցել և մեր տնտեսության համար հսկայական նշանակություն ունեցող գոմաղրն ոգտագործել նպատակարժար ձեռփակությունը մեր մասունք առաջանական աղբանոցների համար անհանդապահ կառուցում ավելացնելու տեսակետից, այլև նրա որդանական նյութերի միջոցով հողի ֆիզիկական և բիոլոգիական դրությունը լավացնելու աեւակետից։ Արհեստական պարարտանյութերը, շատ չնշին բացառությամբ, այդ հատկությունից զուրկ են, իսկ սննդանյութերի աղղեցության և բույսերի նորմալ զարդարման հիմնական պայմանը հենց հողի այս հատկանիությունների լավացումն է։ Հողի ֆիզիկական և բիոլոգիական լավացումը, ինչպես վերը տեսանք, կայանում է նրանում, վոր նա կանոնավորում են հողի ջրային, ջերմացին և ողային ռեժիմը, ծանրը հողը փխրեցնում է, իսկ ավազային հողերը կպահպաժ դարձնում, նպատակ են որդանական և անորդանական նյութերի քայ-

գումարի գործածությունը. — Գոմաղրի գործածությունը կարենու են վոչ միայն բույսերի սննդանյութերը հողում ավելացնելու տեսակետից, այլև նրա որդանական նյութերի միջոցով հողի ֆիզիկական և բիոլոգիական դրությունը լավացնելու աեւակետից։ Արհեստական պարարտանյութերը, շատ չնշին բացառությամբ, այդ հատկությունից զուրկ են, իսկ սննդանյութերի աղղեցության և բույսերի նորմալ զարդարման հիմնական պայմանը հենց հողի այս հատկանիությունների լավացումն է։ Հողի ֆիզիկական և բիոլոգիական լավացումը, ինչպես վերը տեսանք, կայանում է նրանում, վոր նա կանոնավորում են հողի ջրային, ջերմացին և ողային ռեժիմը, ծանրը հողը փխրեցնում է, իսկ ավազային հողերը կպահպաժ դարձնում, նպատակ են որդանական և անորդանական նյութերի քայ-

քայմանը և լուծելիությանը, և այլն Ահա գոմաղբի
այս ըոլոր դրական հատկությունները լրիվ ոզագոր-
ծելու համար վոչ միայն պետք և գոմաղբը խնամքով
հավաքել և լավ պահել, այւել կանոնավորել նրա գոր-
ծածությունը»

Վերը նկարագրված ձևով պահված գոմաղբն ար-
գեն 3—4 ամսից հետո կարելի յի տեղափոխել դաշտ-
Դաշտ տեղափոխում են սայլերով կամ բեռնատաք
ավտոմոբիլներով, ըստ վորում սայլից կամ ավտոմո-
բիլից աղբը պետք և թափել հավասար հեռավորու-
թյան վրա և անմիջապես հավասարապես շաղ տալ
հողի յերեսին և վարել վորքան ուշ ենք վարում հողը՝
աղբը դաշտում շաղ տալուց հետո, այնքան նրա աղ-
բեցությունը փոքրանում ե, վորովհետեւ այդ դեպքում
աղբի միջի ամսնիակը ցնդում և ողում և որգանա-
կան նյութերն ել արագությամբ քայլայվում են,
վորովհետեւ շաղ տված աղբի մեջ մեծ քանակությամբ
ու և ժանուար, իսկ մենք գիտենք, վոր վորքան գոմաղ-
բում ող շատ և լինում, այնքան նրա որգանական
նյութերն արագ են քայլայվում։

Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում, ընդունված
և աղբը դաշտ տանել, կույտերով դասավորել հողի
յերեսին և այդպիս թողնել յերկար ժամանակ։ Սա
անհամեմատ ավելի վատ ձե ե, քան յիթ աղբը հողի
յերեսին փռելուց հետո, յերկար ժամանակ առանց
վարելու թողնենք։ Վորովհետեւ այս դեպքում թեև ամօ-
նիակը քիչ ե ցնդում, սակայն որգանական նյու-
թերի քայլայումը նույնպես արագ ե գնում ե, վոր
գլուխվորն ե, աղբի սննդանյութերը ծծվում են հողի
մեջ աղբի կիտած տեղերը, և յերբ վորոշ ժամանակից

հետո շաղ ենք տալիս և վարում, ապա դաշտի մեջ
մեծ անհամաշափություն և առաջանում, Այն տիեզերք,
վորտեղ աղբի կիտուկներն են գտնվում, մեծ քանա-
կությամբ սննդանյութեր են կռւակվում և բույսերն
ել շատ փարթամ են աճում, իսկ նրանց միջի տարա-
ծությունները սննդանյութեր շատ քիչ են ստանում և
այստեղ բույսերն ել վատ են աճում, Այսպիսով դաշ-
տում ստացվում է մի հսկայական խայտարդետու-
թյուն, վորը շատ վատ և անդրադառնում հողի բեր-
քատվության վրա:

Յեթե հնարավոր չե գոմաղբը տեղափոխելուց հետո
անմիջապես վարել, առա ավելի լավ և գոմաղբը հա-
գասար կերպով հողի յերեսին փռել, քան թե կույտե-
րով թողնել Այս՝ հողի յերեսին փռել, հատկապես
լով և աղղում ծանր, կավային հողերի վրա, Աղբային
ժածկոցի տակ նրա ֆիղիկական հատկությունները
լավանում են, հողի մեջ հասունացման պրոցես և տեղի
ունենում և դա հետազում բերքի վրա շատ լավ և
անդրադառնում: Սակայն, իհարկե, գոմաղբի ուղարկու-
ման այս ձեր պետք ե խիստ սահմանափակել և կիրա-
ռել բացառիկ ծանր հողերի նկատմամբ, իսկ ընդհան-
րապես գոմաղբը դաշտ տեղափոխելու աշխատանքը
պետք ե այնպես կազմակերպել, վոր հնարավոր լինի
տեղափոխած աղբն անմիջապես փռել հողի յերեսին և
խկույն վարել, կամ աղբը դաշտի մի վորեե մասում
կիտել և այդ կույտը սինչե շաղ տալը հողով ծածկել:

Գոմաղբի հողը մտցնելու խորությունը կտխված ե
հողի հատկությունից. վորքան հողը թեթե և, վորքան
նա ավաղային և, այնքան գոմաղբը պիտի խորը
մտցնել, հակառակ դեպքում, նա հողի յերեսի շերտում

արագությամբ կքայքայվի և նրա ազդեցության տես-
դությունը կարճ կլինի, Ծանր հողում, ընդհակառակը
գոմաղը պետք ե հողի յերեսանց տալ հողին, վորով-
հետեւ խորը մտցնելու դեպքում, գոմաղը խոր շերտե-
րում ողի բացակայության հետեւանքով չի քայքայ-
վում, նա այնտեղ հաճախ տորֆանման նյութերի յե-
պերածվում, իսկ վերջիններս հողի մեջ դժվար են քայ-
քայվում և լրիվ ազդեցություն չեն գործում հողի վրա:
Հանձնաբարելի յե թեթև հողերում գոմաղը մտցնել
18—20 սանտիմետր խորությամբ, իսկ ծանր հողերում՝
13—15 սանտիմետր:

Սովորաբար ընդունված ե՞նեկտարին 40 տոնն
գոմաղը համարել նորմալ դողա, բայց պետք ե նշել,
վոր այդ դողան ձեռնտու յե տալ մեր լեռնային
շրջաններում միայն: Իսկ դաշտային տաք և չոր շրջան-
ներում ավելի լավ ե տալ ավելի փոքր քանակությամբ,
այն և 20—30 տոնն, սակայն ավելի հաճախ: Յեթե
մենք լեռնային շրջաններին տանք հեկտարին 40
տոնն ամեն 5—6 տարին մեկ անգամ, դաշտային
շրջաններում այդ նույն քանակությամբ գոմաղը՝
ավելի լավ ե տալ յերկու նվազ 20-ական տոնն՝ 3—
տարին մեկ անգամ: Դրա պատճառն այն ե, վոր մեր
դաշտային տաք և չոր շրջաններում հողի մեջ որգա-
նական նյութերի քայքայումը շատ արագ ե կատար-
վում և կարելի յե տսել, վոր յերեք տարուց հետո
աղբի ազդեցությունն այլևս չի նկատվում:

Ի՞նչ վերաբերում է աղբի ազդեցության տեսողու-
թյանը, ապա պետք ե տսել, վոր այս հարցի նկատ-
մամբ խիստ տարածայնություններ կան գիտնական-
ների շրջանում: Շատերը գոմաղը ազդեցության

անողությունն ընդունում են շատ յերկար, ուրիշների հարծիքով գոմաղրի որդանական նյութերի ազդեցությունն անողությունը յերկու տարուց ավելի չի գիտամ: Ըստ յերեսութին, Խորհրդային Հայաստանի պայմաններում կարելի յե ընդունել, վոր լիոնային շրջաններում գոմաղրի ազդեցության անողությունը լինում է 4—5 տարի, ըստ վորում բույսերն առաջին տարին գործածում են նրա միջի ազոտի մոտ կեսը. յերկրորդ տարին՝ մեկ քառորդը և հետագա յերրորդ և չորրորդ տարիներին՝ $\frac{1}{8}$ -ականը: Ինչ վերաբերում է գոմաղրի մեջ գոտնվող ֆոսֆորին և կալիումին, ապա նրանց ոգտագործումը բույսերի կողմից համեմատաբար ավելի գանդաղ և ընթանում, ըստ վորում այդ ոգտագործման արագությունը մեծ չափերով կախված է նաև ցանվող բույսերից, ինչպես այդ յերեսում և հետեւյալ առաջակից (Շնայդեվինդ):

1-րն տարի	2-րդ տարի	Յերկու առաջնական գործություն	1-րն տարի	2-րդ տարի	Յերկու առաջնական գործություն
Ֆոսֆորի համարկել	Քարի	Ցերկուտ ապահովություն	Ֆոսֆորի համարկել	Ցորեն	Ցերկուտ ապահովություն
Ֆոսֆորի համարկել	Քարի	Ցերկուտ ապահովություն	Ֆոսֆորի համարկել	Ցորեն	Ցերկուտ ապահովություն

Ֆոսֆորի համարկել	28,9%	3,9%	33,7%	15,3%	9,4%	24,7%
Կալիումի ոգտագործություն	30,7%	12,0%	42,7%	54,7%	15,7%	60,4%

Այսաեղից յերեսում ե, վոր գոմաղրով պետք է պարարտացնել առաջին հերթին ճակնդեղի դաշտերը, ապա կարտոֆիլը և յերրորդ հերթին միայն հացահատիկները: Խորհրդային Հայաստանի պայմաններում

գոմաղը շատ լավ է աղղում նաև մեր խոտհարքների բերքի վրա, ո՞նչպես այդ յերեվում և Լոռիա անառնապահական զոնալ կայանի այդ ուղղությամբ կատարած փորձից (Պավլովիչ):

Պարտուանութերի աղղեցությունը մացնելու 1-ին տարում 1933 թ.			Պարտուանութերի աղղեցությունը մացնելու 2-րդ տարում 1934 թ.			Համար թիվ կամ անուն ազգանուն	Համար թիվ կամ անուն ազգանուն
Տարուանութերի աղղեցությունը մացնելու 1-ին տարում 1933 թ.	Համար թիվ կամ անուն ազգանուն	Համար թիվ կամ անուն ազգանուն	Համար թիվ կամ անուն ազգանուն	Համար թիվ կամ անուն ազգանուն	Համար թիվ կամ անուն ազգանուն		
Կոնսուլ	9,25	—	—	16,3	—	—	—
10 տանն գոմաղը	14,35	5,10	55,1	24,40	8,10	47,9	13,20
20 , , ,	17,30	8,05	87,0	29,30	13,00	79,8	21,50
30 , , ,	19,10	9,85	106,4	35,20	18,90	116,0	28,75
40 , , ,	24,10	13,85	150,0	44,30	28,00	171,8	41,85

Այս թվերը ցույց են տալիս, վոր գոմաղը խոտի բերքն ավելացնում է ավելի քան յերկու անգամ, ըստ վորում նրա աղղեցությունը յերկրորդ տարում ավելի մեծ է, քան առաջին տարում։ Սրա պատճառն այն է, վոր գոմաղը հողի յերեսին փոփելու հետևանքով աննոդայութերն առաջին տարին քիչ են ներծծվում հաղի մեջ. մինչդեռ յերկրորդ տարին նրանք ավելի զատ են լուծվում և մեծ քանակությամբ ներծծվում հաղի մեջ։

Այս փորձից պետք է դատ առնեն մեր լանացին շրջանների խորհրդային և կոլեկտիվ տնտեսաթյունները, հատկապես խորհութեառները, ուր կուտակվում են հսկայական քանակությամբ աղը, վորը

սակայն համարյա ամբողջովին մնում և բակերում
թափած, տպականում և տնտեսության ամբողջ առե-
րիտորիան և արեի ու անձրեի տակ փչանում, անո-
գուտ կորչում։ Մինչդեռ յեթե այդ գոմաղբը ռացիո-
նալ ձեռվ հավաքվի, պահպանվի ու ոգտազործվի, մեր
խոտի բերքը յերկու անգամ ավելի կլինի:

Բացի դաշտերից և մարդագետիններից, գոմաղբն
ուժեղ չափով ավելացնում և նաև բանջարանոցների և
խաղողի ու պտղատու այգիների բերքը, վորոնց պետք
է տալ 3—4 տարին մի անգամ՝ 20—30 ցենտներ։

Միզոպահեստ — Գոմում ցամքարի մեջ չծծված մեզի
համար պետք է աղբանոցի կողքին մի այլ փոս փորել,
այս անգամ արդեն մաս 2—2 $\frac{1}{2}$ մետր խորությամբ
Սրա հատակը և պատերը պետք է նույնպես ցեմենտով
կամ կավով լավ սվաղել և կտուրը ծածկել։ Այդ փոսը
կավից պատրաստած խողովակներով պետք է միացնել
գոմի նավի հետ և ավելցած հեղուկը այդ խողովա-
կով լցնել միզապահեստի մեջ։

Գարնանը, պահեստը լցվելուց հետո, միշտ պետք է
ջրհան մեքենայով հանել, տակառներով տեղափոխել
գաղտ և հավասարապես զաղ տալ հողի յերեսը։ Մեզով
ուվելի լավ և պարարտացնել բանջարանոցները և
խոտհարքները։

2. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԳՈՄԱՂԲ

Այն անտեսությունները, վորոնք անառուններ
քիչ ունեն և վորտեղ մեծ քանակությամբ ծղոտ և
այլ որդանական նյութեր են կուտակվում, սկսել են
վերջին ժամանակները լայն չափերով կիրառել այս-
պես կոչված «արհեստական» գոմաղբ։ Բանն այն է,
վոր ծղոտով և այլ բուսական մնացորդներով անմիջա-
պես — առանց վորսել վերամշակության, դաշտերը պա-
րաբռացնելու դեպքում, ինչպես և թարմ գոմաղբ։

գործածության ժամանակ, վոչ միայն բերքի հավելում
չեն տալիս, այլև հաճախ բերքի անկման պատճառ են
դառնում։ Սա բացատրվում է նույն պատճառով, ինչ
որ թարմ գոմաղբի գործածության կեպքում, այ-
սինքն՝ ածխածնային որգանական շատ նյութեր
միացնելով հողում։ Մենք հողի միկրոօրգանիզմների
համար բաղմացման ռժեղ հնարավորություն ենք ստեղ-
ծում, և վորովհետեւ այդ նյութերի մեջ ածխածնի քա-
նակին համապատասխան ազային նյութեր չեն պարու-
նակվում, ուստի միկրոօրգանիզմներն իրենց բաղմաց-
ման համար անհրաժեշտ ազուրը վերցնում են հողից և
կանաչ բույսերին զրկում ազուրից։

Նկատի ունենալով այդ հանդամանքը և բուսական
նյութերի այդ վնասակար հատկությունները վոչնչաց-
նելու համար, վերջին ժամանակները ծղութը և բուսա-
կան այլ մնացորդները վերամշակման են յենթարկ-
ում, պատրաստելով այսպես կոչված «արհեստական
գոմաղբ»։

Արհեստական գոմաղբը պատրաստվում է հետեւյալ
ձեռքից։ Գոմաղբ պատրաստելուն հատկացված բուսական
մնացորդները, հատկապես ծղութը դարսում են մոտ 30
սանտիմետր հաստության շերտով և զրան ավելաց-
նում այնքան ջուր, վոր ջրի տոկոսը հասնի 80-ի
(յեթե արհեստական գոմաղբ պատրաստում ենք ծղո-
ւից, վորի մեջ $12^{\circ}/\circ$ ջուր կա, ապա 100 կիլոգրամ
ծղութին պետք է ավելացնել մոտ 440 լիտր ջուր),
ապա պարտեզի մի քիչ լավ հող՝ բակտերիաներով վա-
րակելու համար։ Վորովհետեւ ծղութի և այլ բուսական
նյութերի մեջ ազուրային և ֆոսֆորային նյութեր
քիչ կան, ուստի բակտերիաների միջոցով այդ նյու-
թերի արագ քայլացում առաջացնելու համար անհրա-
ժեշտ է ավելացնել նաև մոտ $3^{\circ}/\circ$ ազուր (100 կիլո-

զրամ ծղոտին 15 կիլոգրամ ցիանամիզ կամ ամսա-
կիռւմ սուլֆատ) և մոտ 10 կիլոգրամ սուլֆերֆոսֆատ։
Այս նորուց միևնույն հաստության ծղոտի շերտը
պարսելով՝ նույնքան ջուր, հող և արհեստական պա-
րաբռանյութեր են ավելացնում և այդպիս կույտի
տարձրությունը հասցնում են 2—2.5 մետրի, թողնե-
լով ոչ դրությամբ յիրկու որ և ապա սեղմում,
պնդացնում են, այդ բանը կարելի յե կատարել անա-
սուններ քշելով կույտի վրա և ապա արտաքին չտ-
րացած մտսր մի քիչ թրջել և ծածկել 5—10 սանտի-
մետր հաստություն ունեցող հողով և այդպիս թողնել
3—4 ամիս։

Այս ձեռվ պատրաստած կույտի մեջ 3—4 ամսվա-
ընթացքում սեղի յեն ունենում համարյա նույն պրո-
ցեսները, ինչոր գոմաղրի հասունացման ժամանակ,
այսինքն՝ ծղոտի և այլ բռւսական մնացորդների մեջ
առաջին հերթին քոյքայվում են լուծվող ածխա-
ջրատները՝ ջաքարները և ոսլան, և սկսվում են
պենտոդանների ու թաղանթանյութերի քայքայումը։
Ծղոտի գույնը սեանում է, բռւսական ստրուկտուրան
վոչ չանում է և նա ընդունում է լավ պատրաստած,
խելական գոմաղրի տեսք, միայն այն տարբերությունը,
որ նա գոմաղրի սպեցիֆիկ հոտը չունի։

3—4 ամսից հետո, այսինքն՝ սարհեստական պա-
մաղրին հասունալուց հետո, նա արդեն կարելի յե
գործածել դաշտերը և այդիները պարաբռացնելու հա-
մար, իսկ այս գործածության յեղանակները ճիշ-
նույննն են, ինչ վոր գոմաղրինը։

Սարհեստական գոմաղրն այժմ լայն չափերով կիրառ-
վում է Յեվրոպայի և այլ յերկրների այն տնտեսու-
թյուններում, որոնք անասուններ քիչ ունեն և վար-
տեղ մեծ քանակությամբ ծղոտ և այլ լուսական մնաց-
որդներ են սաւցվում և նրա գործածությունից նույն-

շափ ոգում ե ստացվում, ինչ բնական գոմաղբից
Այս ապացուցելու համար բերենք յերկու որինակը
1930 թվին Համամիութենական պտրարտացման ին-
ստիտուտի կատարած փորձը տվել ե հետեւյալ ար-
դյունքը:

Պարարտացրած՝ 100 ցենսներ կարտոֆիլ հեկտարից
Պարարտացրած բնական դոմաղբով՝ 287,6 հեկտն. կարտոֆ. հեկտ.
Պարարտացրած արհեստական գոմաղբով՝ 264,3 > >

Մի ուրիշ փորձ նույն թվին կատարել ե Հայաստ-
նի քիմիական կայանը: «Զազ» խորհունտեսության
փշացրած դարժանից վերը նկարագրած ձևով արհես-
տական գոմաղբ պատրաստվեց, վորով պարարտաց-
ման յերկու տարի տևող փորձը տվեց հետեւյալ ար-
դյունքը:

Բ ա մ բ ա կ	1930 թ.		1931 թ.		Հ ա ր ում	
	կ ո ս դ ու ղ - ն ե ր ի թ ի - վ լ	Բ ե ր ջ ո ւ	կ ո ս դ ու ղ - ն ե ր ի թ ի - վ լ	Բ ե ր ջ ո ւ	կ ո ս դ ու ղ - ն ե ր ի թ ի - վ լ	Բ ե ր ջ ո ւ
Յառագ պարարտացման	54	207,2	52	199,3	106	406,5
Պարարտացրած բնա- կան գոմաղբով . . .	62	231,0	57	225,5	119	456,5
Պարարտացրած արհես- տական գոմաղբով . . .	65	285,0	63	237,0	128	472,0

(Փորձը դրված եր կայանի վեգետացիոն տնա-
կում 1 քառակուսի մակերես և 1 մետր խորություն
ունեցող հողի մեջ թաղված ցեսենտի արկղների մեջ,
բամբակի վրա, Փորձը կատարողը կայանի աշխատա-
կից ընկեր Յե. Մովսիսյանն է):

Վերը բերած թվերը ցույց են տալիս, վոր արհես-
տական գոմաղբն իր աղղեցությամբ վ. չ միայն յետ

շի մեռմ բնական գոմաղրից, այլև յերկրորդ փորձի մեջ նրա ազդեցությունը մոտ 3% ով բնական գոմաղրից ավելի յէւ

Կորհրդացին Հայաստանում արհեստական գոմաղր պատրաստելու համար անհրաժեշտ ծղոտն առաջմ բավարար քանակությամբ չունենք, վորովհետեւ ծղոտի մի մտութ վորպես դարման և գործածվում, մի մասն եւ պետք և անպայման վորպես ցամքար գործածել, վորի քանակը վորքան շատ լինի, այնքան լավ, հասցընելով յուրաքանչյուր զլուխ անառունին որական 5—6 կիլոգրամի: Սակայն դրությունն այսպես չի մնալու: Նախ խոտարույսերի ցանքերի ավելացման հետեանքով հետզհետեւ պետք և պակասեցնել դարմանի վորպես կերի՝ գործածությունը և յերկրորդ կոմբայն-ներով հավաքված ռաշտերի ծղոտը պետք և ամրող հավաքել և դրանից արհեստական գոմաղր պատրաստել: Բացի այդ, մեզ մոտ մեծ քանակությամբ մոլախոտեր են աճում, վորը նույնպես ոլետք և հնձել և արհեստական գոմաղր պատրաստել: Նույն նպատակի համար ոլետք և գործածել նույն մեր ճահիճներում աճող մեծաքանակ յեղեգն ու անպետք խոտը, վորն այժմ աշնանը վառում են և իդուր վոչնչացնում: Սակայն յեղեգը վորպես արհեստական գոմաղրի մատերիալ գործածելու դեպքում չպետք և մինչև ուշ աշնան թողնել, այլ պետք և հնձել ամառը, յերբ նրանք զետ բոլորովին չեն փայտացել:

3. ԿՈՄՊՈՍ (ԽԱՌՆԱԴԻ)

Խառնաղրը պատրաստվում է տնտեսության ամենահսկակի թափուկներից ինչպես՝ խոհանոցի մնացորդներից, զանազան բույսերի անպետք մնացորդներ՝ կարտոֆիլի ցողուններ, փչացած կարտոֆիլ, զա-

զար և այլ բանջարեղիններ, ամեն տեսակ ծառերի տերեններ, կենդանական մնացորդներ, ինչպիսին են մօրթած կենդանիների ստամոքսի օլարունակությունը, վոսկորներ, կճղակներ, մաղ, արյուն և այլն. Այնուհետև կոմպոստ պատրաստելու համար գործ են ածում փողոցի և բակի աղբը, թռչունների ծերալ, ծխնելուցդների մուրը, առուների տիղմը, և այլն, և այլն:

Կոմպոստ պատրաստմամբ և հետեւյալ ձևով. ընտրում են բակում մի վորեն հարթ տարածություն, դարսում են մի շերտ 15—20 սանտիմետր հաստությամբ ծղուտ, վրան ածում են նույնովիսի հաստության հողի շերտ. Ապա սրա վրա ածում են 10—15 սմ հաստության կոմպոստացվող որդանական նյութեր, սրա վրա թափում են մի շերտ մոխիր (մոտ 5—10 սմ) կամ հող. Այնուհետև սրա վրա նորից են լցնում որդանական նյութեր և հող, և այսպես, մինչև մոխիրը լույսի բարձրությունը հասնի մեկ մետրի. Այնուհետև կոմպոստի կույտը արտաքուստ ծածկում են 10 սանտիմետր հաստության հողի շերտով, վորպեսզի նա խռնավ մնա: Ամառվա շող յեղանակներին պետք է կույտն արտաքուստ ջրով թրջել

Շատ լավ ե այդ կույտի վրա ցանել զդում կամ վարունք, վորոնք իրենց խիստ տերեններով կծածկեն կույտի մակերեսը և նա միշտ ստվերի տակ կլինի:

Ցեղե կոմպոստի կույտը մինչեւ գործածությունն այդպես թողնենք, ապա միապաղապ. լավ քայլայիմած տասսա չենք ստանա: Դրա համար ել 3—4 ամիսը մեկ անգամ պետք է կույտը վերադասավորել: Այս պերադասավորումը կատարում են հետեւյալ ձևով: Կոմպոստի կույտի կողքին նորից 10--15 սմ հաստության ծղուտ են վառմ, վրան ածելով 10 սմ հաստության հողի շերտ: Ապա կոմպոստը տեղափոխում են այդ նոր

անգը, ըստ վորում կոմպոստի հին կույտի վերին շեքտենը լցնում են նոր կույտի տակը և հետզնետե շերտացնը դասավորում են այնպես, որ վերին շերտն ընկնում է տակը. իսկ ներքին շերտը՝ վերը. Ապա նորից ամբողջը ծածկում են 10 սանտիմետրանոց հաղի շերտով և թողնում. Այս աշխատանքը սովորաբար կրկնում են տարեկան 3 անգամ, վորոց հետո արդեն կոմպոստը պատրաստ ե գործածության համար. Իսկ պոստ պատրաստելիս հիմնական նյութերն են՝ խռովանցի մնացորդները, բակի և փողոցի պղը, հավերի ծերաց և այլն. կարելի յե ավելացնել նաև արտաքնոցների պղը. Վորի միջոցով թե կոմպոստի քանակը կավելանա, և թե նրա աննդանյութերի, ազոտի քանակը կշատանա:

Ամենից լավ ե կոմպոստը գործածել բանջարեղնների, հատկապես կաղամրի պարարտացման համար. Կոմպոստը լավ պարարտանյութ և նաև պտղատաճառերի համար. Ինչպես նաև խոտհարքների և մաքաղաբետինների համար. Վորովինետն կոմպոստն առաջին հերթին հումուսային պարարտանյութ ե, ուստի զառնպատակահարմար ե կոմպոստով պարարտացնել առաջին հերթին ծանր կավային և ավազային հողերը.

Թեև, ինչպես ասացինք, կոմպոստն ըստ նրա պարարտացման համար գործածվող նյութերի, տարբերքիմիական կազմություն ունի, սակայն ավելորդ չեն նրա կազմության ժամին ընդհանուր հասկացողություն ստանալու. համար տակ վորակիս կոմպոստի միջին կազմությունը համարվող հետեւյալ թվերը:

Զուր	15,80%	Ֆոսֆոր (P_2O_5)	0,20 %
Արդանական նյութ	75,00%	Կալիք (K_2O)	0,25 %
Եղոտ	0,85%	Կիր (CaO)	3,75 %

Այստեղ պետք է ավելացնել, վոր թեև կոմպոսալը, ինչպես նրա կազմությունից յերեռմ ե, առաջին հերթին հումուսային (որգանական) պարարտանյութ ե, սակայն նրա միջի սննդանյութերի զերն ես փոքր չեւ կոմպոստի ազոտը դանդ դ, իսկ ֆոսֆորը և կալիք արագ ազդող սննդանյութեր են:

4. Մ Ո Խ Ի Բ

Մոխիրը ևորհրդային Հայաստանում լայն չափերով գործ ե ածվում վորպես պարարտանյութ և իրոք նա բավականին լավ կալիումի և ֆոսֆորային պարարտանյութ ե, վառելիքի այրելու ժամանակ այրվում են նրա բոլոր որգանական նյութերը և վեր են ածվում ախաթթվի և ջրի ու ցնդում են. նույնը աեղի յեւ ունենում նաև ազոտի հետ, այսից քն նա ել ե ցնդում ոդում, մնում են միայն այսպես կոչված շանքային կամ մոխիրային նյութերը, վորոնց մեջ բռյաների սննդանյութերից զերակշռում են կալիումը, ֆոսֆորը և կիրը, այսպես՝

	Կարին ֆոսֆոր կիր
Լայնատերեկ ծառ. փայտի մոխիրը պարունակ.	10,0% 3,5% 30%
Փղատերեկ	6,0% 2,5% 35%
Աշորային ծղուտի	20,0% 5,0% —
Աթարի մոխիրը (մոտավորապես)	4,09% 5,17% —

Այսպես ու բեմն, մոխիրը շատ լավ պարարտանյութ ե հատկապես այնպիսի հողերի համար, վորոնք ազոտով ապահովված են և ֆոսֆորի ու կալիումի կարիք ունեն: Սակայն պետք է ասել, վոր ևորհրդային Հայաստանում աղոտով տպա հովված հողեր համարյա չկան, ուստի մոխիրով պարարտացնելու ժամանակ կատար

պետք և հողերը միաժամանակ գոմաղբով (կամ ազատային պարարտանյութերով) պարարտացնել, կամ մոխրով պարտացնել գլխավորապես թիթեռնածաղկավոր բույսերը, վորովհետեւ նրանց ազոտային սննդառանունը հողի աղոտից անկախ և և կամ մոխիրը գործադրել կոմպոստ պատրաստելու ժամանակ։ Վերջին դեպքում, մանավանդ յեթե կոմպոստին ավելացնում ենք կենդանական ծաղում ունեցող նյութեր, յեղջյուրներ, կճղակներ, մաղ և այլն՝ ապա մոխրի սպնությամբ մենք ստանում ենք մի պարարտանյութ, վորը, բացի որդանական և ազոտային նյութերից, կպարուշ ակի նաև բավարար քանակությամբ ֆուֆոր և կավի ինչ վերաբերում և մոխրի գողաներին, ապա պետք ե առել, վոր մեր դաշտային շրջանների համար պետք ե գործածել հեկտարին 4—5 ցենտներից վոչ ավելի, իսկ լեռնային, աղերով համեմատարար աղքատ հողերում՝ 8—10 ցենտներ։ Սակայն, կրկնում ենք, ավելի նպատականարմար և մոխիրը վոչ թե մաքուր դրությամբ, այլ որդանական նյութերի հետ խառնած մոցնել հողը։ Ենքնին հասկանալի յե, վոր անձրևներից պաշտպանելու լուծվող նյութերի կորուստը չունենալու համար մոխիրը պետք ե հավաքել ու պահել ծածկի տակ։

* * *

Եռորհրդային Հայաստանի ղանազան շրջաններում գտնվում են բաղմաթիվ հին բնակավայրերի ավերակներ, վորոնք յերբեմն մեծ քանակությամբ ազոտ, ֆուֆոր և կավիում են պարունակում իրենց մեջ և վորը մեր կոլտնտեսականներն ոգուագուծում են վորպես

պարարտանյութ։ Վորոշ ավերակներ նաև մինչև 8 տո-
կոս որդանական նյութ են պարունակում իրենց մեջ,
վորը վորպես պարարտանյութ ավելի արժեքավոր է։
Բիչ չեն նաև մեր լիանային շրջաններում հին դոմա-
տեղերը, ուր հարյուրավոր տարիներ անասուններ են
պահպել, և վորտեղ մեծ քանակությամբ թե որդանա-
կան նյութեր են կուտակվել և թե մոխրային սննդա-
նյութեր։ Այս բոլորը հարկավ կարելի յեւ և պետք և
ոզտագործել դաշտերը պարարտացնելու համար, սա-
կայն վորովհետեւ նրանց քիմիական կազմությունը
դեռևս ուսումնասիրված չե, ուստի այդ պարարտա-
նյութերի լրիվ արժեքի և անհրաժեշտ դողաների մա-
սին վորոշակի վոշինչ ասել չե կարելի։ Այդ նյութերը
հայտնագործելու դեպքում, անհրաժեշտ և միջին նմուշ-
ներ ռւդարկել տվյալ շրջանի ՄՏ կայանների լաբորատո-
րիաները, վորտեղ նրանք կորոշեն այդ պարարտանյու-
թերի մեջ պարունակող որդանական նյութերը, ազուրը
(նաև նիտրատային ազուր), ֆոսֆորը, կալիումը և
կիրը և ըստ այնու ել կորոշվեն թե նրանց արժեքը
թե ամեն անդամ հեկտարին արվելիք քանակը։

* * *

Բացի այդ, վորպես պարարտանյութ գործ և ած-
վում նաև առուների տիղմը։ Հոսող ջրերի մեջ լողա-
ցող քազմաթիվ միներալների և որդանական նյութե-
րի մասնիկները ջրի դանդաղ հոսանքի ժամանակ
նստում են նրա հատակին և այսպիսով ամեն տարի
մեծ քանակությամբ տիղմ և կուտակվում մեր առու-
ներում։ Այդ տիղմը ժամանակ առ ժամանակ հանում
են տավից, առուն մաքրում են և ըստ մեզ մոտ ըն-

պունիած սովորության թափում են առունեցի յեզրեցին և այդպես թողնում։ Սակայն, վորովհետեւ այդ տիղմն իր մեջ մեծ քանակությամբ բռյաերի աննդանյութեր (Գոսֆը և կալի) և վորոշ չափով նաև որպանական նյութ և պարունակում իր մեջ, ուստի տիղմը վոչ մի դեպքում տառնց ոգտագործման չի կարելի թողնել, այլ նրանով պետք է դաշտերը պարագացնել։


Տիղմը մասամբ գործադրում են կոմպոստ պատրաստելու ժամանակ, ըստ վորում տնտեսության կոմպոստացման յենթարկվող մնացորդների հետ տիղմ են խառնում, մասամբ ել գործ են ածում անմիջապես վերջին դեպքում տիղմն առից հանելուց հետո լցնում են սարքերը և վարից առաջ հավասարապես վտում են մասակա դաշտերի վրա, ինչպես գոմաղրը։


Մեր առուներում կռւտակվող մեծաքանակ տիղմն եռ պետք ե անպայման ոգտագործել դաշտերը սրբարարացնելու և հողի բերքը բարձրացնելու համար։


Տեխ. խմբ.՝ Հ. Ս Ա Ր Ա Վ Յ Ա Ն
Թ Ե Ր Ա Կ Բ Ւ Հ. Ա Յ Վ Յ Ա Ն

Դ Լ Ա Վ Հ Ի Մ Պ. Ա 70, Հ Ր Ա Մ, Խ Ֆ 305,
ա յ ա ս պ ի ւ թ թ 107, տ ի ր ա ժ 40 Օ հ ա ն ձ ը ն կ ա ծ , և ա ռ ա շ ա դ ո ւ թ յ ա ն 11/II 1936 թ .
ս ս ո ր ա դ ր վ ա ծ և ա պ ա դ ր ե լ ու 1936 թ . 3, III
3 ս պ ա դ ր վ , 1 ս պ ա դ ր վ . 2500 ս պ . ն գ .

Պ յ ա զ հ ր ա ս ի ս պ ա ր ա ն , Ծ ե ր ե ս ն
Ն ա լ բ ա ն ղ յ ա ն 11







631.8

£ - 14

ТРУД 40 №09.



БИБЛИОТЕКА ПОЛХОЗНИКА И РАБОЧЕГО СОВХОЗА

ПРОФ. Я. КАЛАНТАРЯН

МЕСТНЫЕ УДОБРЕНИЯ

СЕЛЬХОЗГИЗ 1956 ЗРИСАЛЬ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037172

A T
2712

ՄԵԿ
օրինակ